ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի N 992-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

31 Հուլիս 2014, 789 - Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.
1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 992-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները՝
1) N 1 ձևի 2-րդ կետի 2.2-րդ ենթակետի «ա» պարբերությունը «ծրագիրը,» բառից հետո լրացնել «, որը պայմանագրի անբաժանելի մասն է, և ապահովել դրա կատարումն ըստ ժամանակացույցի,» բառերով.
2) N 2 ձևի 3-րդ կետի 3.5-րդ ենթակետում՝
ա. «ա» պարբերությունը «անբաժանելի մասն է,» բառերից հետո լրացնել «, և ապահովել դրա կատարումն ըստ ժամանակացույցի,» բառերով,
բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ժդ» պարբերությամբ.
«ժդ. ապահովել կազմակերպության շահութաբերությունը:»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հովիկ Աբրահամյան